ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովը հայտարարում է պետական սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրման բաց

ՄՐՑՈՒՅԹ

հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը) տարածագնահատման գոտին	Ծածկագիրը Մակերեսը (քմ)	Կառուցապատման իրավունքի ժամկետը	Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային չափը	Օգտագործման նպատակը	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Սահմանափա-կումների առկայությունը, շրջակա միջավայրի և պատմամշա-կութային հուշարձանների պահպանության միջոցառումները	Կառույցի հարկայնությունը, շինարարության սկիզբը և ավարտը	Կառուցապատման տոկոսը Կանաչապատ մակերեսի հարաբերությունը կառուցապատված (անջրանցիկ) մակերեսին (փաստացի և հեռանկարային)	Տարածքի այլ սեփականատերերի և օգտագործողների տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի միավորների դրանց առկայությամբ պայմանավորված սահմանափակումների և սերվիտուտների վերաբերյալ
Մրցույթի ներկայացված հողամասեր										
Էրեբունի թաղային համայնք										
1	*Էրեբունի փողոց հ.18/5 7-րդ գոտի*	*Կ 09-02 110.0*	*20 տարի*	*50.0 հազ. դրամ*	*Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար*	*Բնակավայրի հող ընդհանուր օգտագործման տարածք*	*չկան*	*1 հարկ Սկիզբը՝ ոչ ուշ մեկ տարուց շին. թույլտվությունը ստանալու օրվանից, շին.ավարտը՝ ըստ շինարարության աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի*	*Կառուցապատում մինչև 100%*	*չկան*
2	*Գաջեգործների 1-ին փողոց հ.28/2 6-րդ գոտի*	*Կ09-03 13336.0*	*20 տարի*	*4 640.0 հազ. դրամ*	*Հանգստի գոտու կազմակերպման համար*	*Բնակավայրի հող ընդհանուր օգտագործման տարածք*	*չկան*	*1-2 հարկ Սկիզբը՝ ոչ ուշ մեկ տարուց շին. թույլտվությունը ստանալու օրվանից, շին.ավարտը՝ ըստ շինարարության աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի*	*Կառուցապատում մինչև 20% Կանաչապատում մինչև 80%*	*չկան*
Շենգավիթ թաղային համայնք										
3	*Բագարտունյաց պող. 2-րդ նրբ. հ.2/2 7-րդ գոտի*	*Կ 08-10 13500.0*	*50 տարի*	*3 054.0 հազ. դրամ*	*Հանգստի գոտու կազմակերպման համար*	*Բնակավայրի հող ընդհանուր օգտագործման տարածք*	*չկան*	*1-2 հարկ Սկիզբը՝ ոչ ուշ մեկ տարուց շին. թույլտվությունը ստանալու օրվանից, շին.ավարտը՝ ըստ շինարարության աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի*	*Կառուցապատում մինչև 20% Կանաչապատում մինչև 80%*	*չկան*

1. Մրցույթին մասնակցել ցանկացող անձիք մրցույթի ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանի անցագրային սենյակում՝ Արգիշտի 1 I հարկ (մուտքը աշտարակի կողմից), ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM::
2. Մրցույթի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ.514173):
3. Մրցույթի հայտերն ընդունվում են փակ ծրարի վրա նշված ծածկագրով, 2 օրինակից, և ներկայացնողին տրվում է հայտը ընդունելու վերաբերյալ ստացական:
4. Մրցույթին ներկայացվող հայտի փաստաթղթերի ցանկի տրամադրումը և հայտերի փակ ծրարներով ընդունումը կատարվում են Երևանի քաղաքապետարանում՝ Արգիշտի 1 II հարկ (մուտքը աշտարակի կողմից) բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից 16:00-ը մինչև 2009թ մարտի 6-ը ներառյալ:
5. Մրցույթի հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ ներկայացնող հայտատուն:
6. Մրցույթի հայտերը բացվում են՝ Մ.Խորենացու 26ա, 4-րդ հարկ 45 սենյակում 2009թ մարտի 10 -ին, ժամը 16:00:
7. Մրցույթի հայտերը ամփոփվում են՝ Մ.Խորենացու 26ա, 4-րդ հարկ 45 սենյակում 2009թ մարտի 11-ին, ժամը 16:00:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ